12. Խ Ո Ն Ա Ն Ո Յ Ո Ի Մ

Կէս գիշեր էր: Ամբողջ տու-
նը քնած էր: Լուսնի շողքը պատուհա-
նից ընկել էր խօհանոց: Մաքուր աման-
ները ու կլեկած պղինձները պսպղում
էին:

Հանգցրած լամպը նախանձով էր
նայում լուսնի պայծառ լոյսին, բայց
լուսինը այնպէս քնքուշ էր ժպտում նրան, որ նա իսկոյն
հանգստացաւ:

Պղինձները, տապակը, սամաւարը, սրճամանը, քամիչը,
շերեփը—բոլորն էլ փայլում էին ու հպարտ նայում էին ի-
րար: Վիճում էին, թէ ո՞րն է իրենց մէջ ամենից փայլունը:


—Ե՛ս.—բացականչեց ուռած սամաւարը խռպոտ ձայնով:
—Տեսէք իմ ոսկի ճառագայթները ի՞նչ-
պէս են վառւում:

—Ո՛չ, ես եմ փայլունը.—զրնգաց
սիպտակ սրճամանը սուր ու բարակ
բիթը վեր քաշելով:

—Ապա մի դէսը նայեցէք.—այն կող-
մից բերանը լայն բաց արաւ ծանր
պղինձը:

—Բա Լ՛ս.—մէջ ընկաւ երկարապոչ
շերեփը:

—Դ՞նձ ինչ ես ամեն բանի մէջ խառնւում.—չորս կողմից



ձայն տւին մեծ ու փոքր պղինձները իրենց դարակից:

Ծակերեան քամիչն էլ ուզում էր մի բան ասի, որ մէկ էլ լուսինը մտաւ ամպի տակ, յանկարծ խոհանոցը մթնեց ու ամենքը ձայնները կտրեցին:

1) Ի՞նչու ամենքը յանկարծ ձայնները կտրեցին, երբ խոհանոցը մթնեց:

2) Ասա մէկ-մէկ ինչի՞ համար ենք գործածում՝ վերը յիշած ամաններն ու խոհանոցի միւս պիտոյքները:

Առած—Ամեն բան իր տեղն ունի:

Հանելուկներ—1) Վերևը ծակ, ներքևը ծակ, մէջը լիքը ջուր ու կրակ:

2) Բռնեմ բռնովս մին, թողնեմ տնովս մին:



13. ՉԵՌՔԻ ՄԱՏՆԵՐԸ

Ճկոյթն ասաւ—Եկէք ուտենք:

Մատանու-մատն ասաւ—Ի՞նչ ուտենք:

Միջի-մատն ասաւ—Աստուած կը տայ:

Ցուցամատն ասաւ—Թէ որ չը տայ:

Բուխ-մատն ասաւ—Գողանանք ուտենք:

Աստուած բարկացաւ, զարկեց բուխ մատի գլխին, միւսներին քաժանեց, բշեց ցած ու հրամայեց, որ միւսներին ծառայի:

1) Ի՞նչով է տարբերում՝ ձեռքի բուխը ոտի բուխ մատից:

2) Ի՞նչ ենք անում՝ ձեռքով, որ ոտով չենք կարող:

3) Ի՞նչ կենդանիներ գիտես, որոնք ոտով ընում են:

Առածն էր—1) Ձւի գողը, ձիու գող կը դառնայ:

2) Ձեռքը ձեռք է լւանում, երկու ձեռքը երես:

Ճստիկ ճկոյթ,


Աղա մատնեմատ,

Երկար-լուրդ միջի-մատ,

Աման-լիզող ցուցամատ,

Մշակ բուխ:

Հանելուկ—Մտէ շամփուր, երկաթէ խորոված:



14. Կ Ա Յ Ի Ն Ա Խ Պ Է Ր

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկաւ մի գիւղ: Տեսաւ, այս գիւղի մարդիկ ձեռով են փայտ կտորատում:

—Ախպէր, ասաւ, ինչո՞ւ էք ձեռով փայտ անում. միթէ կացին չունէք:

—Կացինն ի՞նչ բան է.—հարցրին գիւղացիք:

Մարդը իր կացինը գօտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց միւս կողմը: Գիւղացիք այս որ տեսան, վազեցին գիւղամէջ, ձայն տւին իրար.

—Տօ, եկէք, տեսէք, կացին ախպէրը ինչ արաւ:

Գիւղացիք հաւաքւեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տւին ու կացինը ձեռիցն առան:

Կացինը առան, որ հերթով կտորեն իրենց փայտը:

Առաջին օրը տանուտէրը տարաւ: Կացինը վրա բերաւ թէ չէ, ոտը կտրեց: Գոռալով ընկաւ գիւղամէջ.

—Տօ, եկէք, եկէ՛ք, կացին ախպէրը կատաղել է, ոտս կծեց:

Գիւղացիք եկան, հաւաքւեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել: Ծեծեցին, տեսան բան չը դառաւ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացաւ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջաւ, եկան, բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է: Գոռացին.

—Վայ տղերք, կացին ախպէրը բարկացել է, տեսէք՝ ոնց է կարմրել. որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կը բերի. ի՞նչ անենք:


Մտածեցին, մտածեցին, ու վճռեցին տանեն բանտը գցեն:

Տարան գցեցին տանուտէրի մարագը: Մարագը լիքը դարման էր. գցեցին թէ չէ՝ կրակն առաւ, բոցը երկինք բարձրացաւ:

Գիւղացիք սարսափած վազեցին տիրոջ ետեկց թէ՛ «եկ Աստծու սիրուն, կացին ախպօրը բան հասկացրո՛ւ:»

- 1) Կացնի տէրը, որ եկաւ, ի՞նչ արաւ:
- 2) Փայտ կտրելու ու ջարդելու համար ուրիշ էլ ի՞նչ գործիք գիտես:
- 3) Ի՞նչից են շինած այդ գործիքները:

Ո Ի Ր Ա Գ Ո Ի Ս Ղ Ո Յ



Մի լինի ուրագի պէս,
Միշտ դէպի քեզ միշտ դէպի քեզ.
Այլ եղեր սղոցի պէս,
Մին դէպի քեզ, մին դէպի մեզ:



15. Պ Ս Տ Ի Կ Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Մի օր Մարիամիկը շփոթւած մօտեցաւ մայրիկին, ցած գցեց իր սևուկ աչքերը ու ասաւ.

—Մայրիկ ջան, ասու՛մ էիր, որ շատ ես սիրում պատիկ պատմութիւններ:

—Այո, աղջիկս:

—Ուզո՞ւմ ես, մայրիկ, պատմե՛մ քեզ մի այդպիսի փոքրիկ պատմութիւն.

—Պատմի՛. միայն թէ հին բան չը լինի:

—Ո՛չ, մայրիկ, բոլորովին նոր է: Ես ինքս հէնց այս րոպէիս իմացայ մեր դահլիճում:

—Որ այդպէս է՝ պատմի՛:

—Բայց շատ պատիկ պատմութիւն է, մայրիկ:

—Ոչինչ. աւելի լաւ որ պատիկ է:

—Սկսե՛մ:

—Սկսի՛:

—Կար ու չը կար...

—Յետո՞յ:

—Կար ու չը կար... մի փոքրիկ կաւէ շնիկ կար... մի սեղանի վրա:

—Լա՛ւ: Յետո՞յ:


—Յետոյ այն, որ այս րոպէիս այդ շնիկը փշրեցի: Բայց էլ չեմ անի, մայրիկ, էլ իսկի չեմ անի:

1) Մայրիկը հաւանեց Մարիամի պատիկ պատմութիւնը:

2) Ի՞նչ տեսակ աղջիկ էր Մարիամը:

Հանելուկ.—Փախչում եմ ետեցս է ընկնում, ետեիցն եմ ընկնում՝ փախչում է:

16. Կ Ա Ն Ա Ն Չ Ա Խ Պ Է Ր



Է՛յ կանանչ ախպէր,
էյ ճանանչ ախպէր.

Արի, քեզ հետ բեր

Արևի շողեր.

Բեր անուշահոտ

Ծիլ, ծաղիկ ու խոտ,

Կարկաչուն վրտակ,

Երկինք կապուտակ,

Խատուտիկ հաւքեր,
 Զրընգան երգեր,
 Գառների մայիւն,
 Խաղ, ուրախութիւն.
 Է՛յ կանանչ ախպէր,
 Է՛յ ճանանչ ախպէր:

- 1) Ի՞նչու ենք ասում՝ զարնանք «կանանչ ախպէր»:
- 2) Չմրանը ի՞նչ ախպէր կասես:
- 3) Որո՞նք են զարնան ամիսները. որո՞նք են ձմեռայ ամիսները:
- 4) Որո՞նք են մնացած ամիսները եւ տարայ ո՞ր եղինակներին են ընկնում:

Ա. ու ա ծ — Մէկ ծաղկով գարուն չի գայ:

17. Զ Ո Ի Ր Ը Փ Ա Խ Ա Ի

Տանտիկինը շուրը լցրեց կաթսայի մէջ, դրաւ կրակին:
 Քանի կաթսան տաքացաւ, շուրը սկսեց շոքել, անհան-
 գստանալ: Սիրտը նեղացաւ, շուռ ու մուռ եկաւ, տակն ու
 վրա եղաւ: Վեր-վեր էր թռչում, բլթբլթում էր, մըրթմըր-
 թում էր, փշտացնում էր:

Կուռում էր ամանի հետ. թքում էր, հրում, ժած էր տալիս,
 որ կրակից շուռ տայ նրան ու ինքն ազատուի: Զրկարողացաւ:
 Տեսաւ կաթսան շատ պինդ է նստել կասկարային. աւելի
 բարկացաւ, փրփրեց, վեր կացաւ, սկսեց գոլորշի դառնալ ու
 փախչել դէպի վեր:

Լաւ է որ տանտիկինը վրա հասաւ:

- 1) Ի՞նչ կը լինէր, եթէ տանտիկինը վրա չը հասնէր:
- 2) Գոլորշին ո՞ր պիտի փախչէր:
- 3) Եթէ երկնքում գոլորշի շատ է հաւաքում, ի՞նչ է դառնում:

Հանելուկ — Քանի կտրեմ՝ կ'երկարի, քանի տաշեմ՝ կը հաս-
 տանայ:

18. Ծ Ո Յ Լ Ա Ղ Զ Ի Կ Ը

Բանն ի՞նչ կանեմ կեղտոտ է,
 Բամբակը կորիզոտ է:
 Մետաքս պիտի, որ մանեմ,
 Մաստակ պիտի, որ ծամեմ,
 Կտերը տիտիկ անեմ,
 Անցնողին մտիկ անեմ.
 Ուտեմ, խմեմ,
 Մթնի, քնեմ:

Ա. ու ա ծ — Ով ալարի, ոչ դալարի:

Հանելուկ — Հինգ ախպէր են. չորսը պատ են շարում, մէկը
 քար է կրում:



19. Ծ Ո Յ Լ Տ Ղ Ա Ն

Զան, ջան, կիրակի-
 Վան, երկուշաբթի:
 Նանի ջան, նանի,
 Փորս ցաւում է,
 Զեմ գնայ դպրոց:

Ի՞նչ կասէր աշխատասէր տղան, ի՞նչ կասէր աշխատասէր
 աղջիկը:

Ա. ու ա ծ — Գժի համար ամեն օր Զատիկ է:

20. Դ Ա Ս Ի Ն

Ամբողջ դասարանը լուռ գրում էր: Կուռում էր միայն գրիչ-
 ների ճոճուցը, երբեմն էլ ուսուցչի ձայնը, որը մէկին-միւսին
 ուղղում էր:

Մեղրակը գրիչը մատներին մէջ ամուր հուլ էր տալիս ու
 շատ էր աշխատում որ գծերը ուղիղ դուրս գան:

Բայց նրա գլուխը աւելի ու աւելի կռանում էր, մատ-

ները աւելի դանդաղ էին շարժուում, ուսուցչի ձայնն էլ կամաց կամաց հեռանում էր, կարծես ուրիշ սենեակից գալիս լինէր:

Ու նրան այնպէս թւաց թէ ինքը տանն է ու ցոյց է տալիս մայրիկին իր գրածը. «տես, ի՜նչպէս գեղեցիկ է, ի՜նչպէս ուղիղ»: Մայրիկն էլ գովում է ու շոյում նրա գլուխը:

Յանկարծ աչքերը բաց արաւ ու նայեց դէս ու դէն: Ընկերները դադարել էին գրելուց և բոլորն էլ ծիծաղելով իրենն էին մտիկ անում: Իոկ կողքին կանգնած էր ուսուցիչը ու շոյում նրա գլուխը:

Սեղրակը վախեցած վեր թռաւ և ուզում էր լաց լինի, բայց ուսուցիչը քաղցր ժպտում էր ու ասում.

—Քունդ տարաւ համ, յոգնեցիր: Ոչինչ, այս բոլորիս դանդաղ կը տան: Կը վազվզես բունդ կը փախչի:

1) Սեղրակի քունը ինչո՞ւ տարաւ:

2) Քունն ինչի՞ համար է:

3) Սեղրակը ինչո՞ւ երազում տեսաւ որ մայրը շոյում է նրա գլուխը:

Հանելուկ—Սիպտակ դաշտեր, սև-սև սերմեր. ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ:

21. ԿՈՌԻՆԿՆԵՐ

Կը՛ռ-կը՛ռ, կըռկըռան
Կոռնկները հա՛ թռան.
Կոռնկների թևի տակ
Եկաւ գարուն մեր դռան:

Առաժ—Մարտն անցաւ, դարդն անցաւ:

22. ԱՐԱԳԻԼՆԵՐԻ ԴԱՐՁՐ

Մի գով առաւօտ էր, երբ արագիլը իջաւ գիւղի վրա իր հին բունը: Երեխաները բախում խաղում էին:

—Բարով, երեխէք.—ձայն տաւ արագիլը իր բարդու ծայրից:

—Արագիլն եկել է, արագիլն եկել է.—ուրախացան երեխաները:

—Նոր ի՜նչ կայ մեր գիւղում:

—Է՛, ինչ որ դու գնացել ես, այնքան բան է պատահել.—պատասխանեց մանուկներից մէկը:—Այնպէս ցո՛ւրտ էր, այնպէս ձմեռ: Դու գլուխդ լաւ պրծացրիր:

—Ափսոս այստեղ չէիր, բրոջս մարդու տւիք.—շտապով յայտնեց միւսը.—հարսանիք արինք, քէֆ արինք:

—Ինձ համար հայրիկս Նոր-Տարուն կրունկով կօշիկներ առաւ.—ցոյց տաւ իր կօշիկները մէկ ուրիշը:


—Իսկ ես արդէն դպրոց եմ գնում.—սկսեց մի փոքրիկ աղջիկ:

—Չէ՞ որ արագիլը դեռ այստեղ էր, որ քեզ դպրոց տարանք.—կտրեց նրա խօսքը մեծ եղբայրը.—Ո՛նց էիր լաց լինում, չէիր գնում:
—Ե՛ս... Ե՛ս...—
Կմկմաց աղջիկը: Ու նորից դարձաւ արագիլին.

—Ես հիմա արդէն ազատ կարգում եմ:

Արագիլը բարդու ծայրին ծանր-ծանր գլուխը ժաժ տաւ.

—Լա՛ւ, լա՛ւ, շատ լաւ ես անում:



1) Փոքրիկ աղջիկը առաջ ինչո՞ւ չէր ուզում՝ գնայ դպրոց եւ հիմի ի՜նչ է ուրախ:

2) Դու ինչ նորովիմն կը յայտնէիր արագիլին:

3) Վերելի պատկերում արագիլները ո՞ր ժամանակ են նկարած:

Հանելուկ—Կապում եմ՝ գնում է, արձակում եմ՝ մնում է:

Արագիլ, բարով եկար,
Հայ, արագիլ, բարով եկար.
Ի ու մեզ գարնան նշան բերիք,
Մեր սրտերը ուրախ արիք:

Արագիլ, երբ գնացիր,
Ի ու մեզանից երբ գնացիր,
Հա՛ փչեցին բուք ու բորան,
Ծաղիկները ամեն տարան:

Արագիլ, բարով եկար,
Հայ, արագիլ, բարով եկար.
Բունդ շինի դու մեր ծառին,
Մեզ մօտ մնա՛ ամբողջ տարին:

1. Ուրիշ ինչ թռչուններ են գալիս գարնանը:
2. Չմենը ո՞ր են լինում նրանք:

24. ՀԱՏԻԿԻ ՉԱՐԹՆԵԼԸ

Յորենի հատիկը պառկած էր հողի տակ:
Եւ հատիկի մէջ քնած էր փոքրիկ սաղմը: Քնած էր,
ինչպէս մի փոքրիկ մանկիկ տաք օրօրոցի մէջ. քնած էր ամ-
բողջ ձմեռը:

Գարնան արևի շողը եկաւ կանչեց նրան.

— Չարթիր, գարուն է:

Եւ հատիկի մէջ գարթնեց սաղմը: Չարթնեց, սաստիկ
բաղց զգաց, սկսեց ծծել իր մօտի պաշարը: Ծծեց, ծծեց ու
մեծացաւ. պատռեց պարուրները ու արմատիկները խրեց
ցած, փափուկ հողի մէջ, նոր կերակուր որոնելու:

Իսկ արևի շերմութիւնը շարունակ բաշտում էր նրան
վերևից, ու սաղմը ձգուում էր դէպի այն կողմը, դէպի վեր:

Չգււց, ձգւց ու յանկարծ նրա դարձար ծիրը դուրս
նայեց հողի մի կոշտի տակից:

Ինչ տանք էր, ինչ պայծառ ու ինչ ազատ նրա շուրջը:
Առաւօտեան հովիկը բնքուշ գգւեց նրան, դրաւ ցօղի
մի կաթիլ նրա կիսաբաց թերթիկին ու փափաց.
— Բարի լոյս:

1. Սրանից յետոյ ծիրը ի՞նչպէս է մեծանալու եւ ի՞նչ է դառնալու:
2. Բացի ցօղենից, ուրիշ էլ ի՞նչ հացաբոյս գիտես:
3. Հացաբոյսերն ու խոտերը ինչքան ժամանակ են ապրում:

Հանելուկ—Բռնեմ ափովս, շող տամ թաթովս, մեռնի բարով,
ապրի տարով:

25. Գ Ի Ժ Ք Ա Մ Ի Ն

Փոթորիկ պապը մի գլիժ
տղայ ունի, անունը Քամի:
Իսկի չի կարողանում հանգիստ
նստի, միշտ մի անկարգութիւն
պիտի անի:

Մին էլ տեսար մէկի զըլ-
խարկը թոցրեց գլխից, միւսի
հովանոցը շուռ տուաւ ու ին-
քը շշշալով փախաւ գնաց:

Գնաց յարձակւեց տան-
տիկնոջ փռած լացքի վրա.
շապիկը շարտեց գցեց հարե-
ւանի բակը, թաշկինակը հա-
նեց կտուրը ու ինքը ընկաւ փողոցները:


Փողոցների փողին հաւաքեց, վեր կալաւ լցրեց անցնող-
ների աչքն ու բերանը, ինքը, վը՛զզ, թողեց կորաւ:


Ի՞նչ կորաւ: Մին էլ ահա՛ ներս ընկաւ բաց լուսամուտից,
փչեց, հանգցրեց ճրագը, քեզ թողեց մթնումը ու սուլելով,
ծիծաղելով վառարանի ծակից դուրս փախաւ:

Գիժ է, գիժ:

Էլ ուրիշ ինչ գժուծիւններ է անում քամին:

Հանելուկ—Ոտները կրակում, գլուխը երկնքում:





26. Գ Ո Ի Թ Ա Ն

Հուր լուսացաւ,
Բարին շատացաւ.
Վաղ լուսարացին
Գութան լծեցին.
Հորովէլ հօ...

Գութանը լարած,
Հօտալը շարած,
Մաճկալը մաճին,
Չեռը աղանջին.
Հորովէլ հօ...

Գութան շան, վարի,
Ակօսը շարի,
Թափ տուր թև արա.
Շուռ տուր սև արա,
Հորովէլ հօ...

Ցանենք արտ անենք,
Հնձենք տուն տանենք,
Ունենանք շատ հաց,
Օրհնեալ է Ասուած..
Հորովէլ հօ...

1) Էլ ինչ գործիքներով են փորում հողը:
2) Բացի հողը մշակելուց, էլ ինչով են պարսպում գետնացիք:
3) Ե՞րբ են ցանում:

Առած—Ինչ որ ցանես, էն կը հնձես:
Հանելուկ — Սև հինեմ, կանաչ գործեմ, դեղին կտրեմ:
Շուռ տասելուկ—Կարճ-պոչ փոցիս, կարճ-պոչ փոցիս:

Լինում է չի լինում մի ծիտ:

Մի անգամ էս ծախ ոտը փուշ է մտնում: Դէս է թռչում, դէն է թռչում, տեսնում է՝ մի պառաւ փէտի է ման գալի, ուզում է թոնիր վառի, հաց թխի: Գնում է ասում.

—Նանի շան, նանի, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Պառաւը փուշը հանում է թոնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի թէ՛ իմ փուշը ետ տուր ինձ:

Պառաւն ասում է.

—Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է թէ՛

—Իմ փուշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, լօշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառաւը մի լօշ է տալի: Ծիտը լօշն առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի հովիւ անհաց կաթն է ուտում:

Ասում է.

—Հովիւ ախպէր, կաթն ի՞նչու ես անհաց ուտում: Ա՛յ լօշը, առ կաթնի մէջ բրդի, կեր. ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թէ՛ լօշս տուր:

Հովիւն ասում է.—Կերայ:

—Չէ, ասում է, իմ լօշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Հովիւը ճարահատած մի գառն է տալի: Առնում է թռչում:

Գնում է տեսնում է՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն:

Ասում է.—Ինչ էք մորթել: Ա՛յ, իմ գառն առէք, մորթեցէք, բէֆ արէք: Ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի թէ՛ իմ գառը տւէք:

Ասում են.—Մորթել ենք, կերել, հրտեղից տանք:

Օա կանգնում է թէ՛ չէ, իմ գառը տալիս էք՝ տւէք, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, հարսին առնեմ, դուրս թռչեմ:

Ու հարսին առնում է թռչում:

Գնում է, գնում. գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամբով
գնում է:

Ասում է.—Աշուղ ախպէր, առ էս հարսին պահի բեղ մօտ:
Ես էլ գնամ քու շուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի աշուղի առաջը կտրում թէ՛ իմ
հարսն ինձ տուր:

Աշուղը ասում է—Հարսը գնաց իրենց տուն:

Սա թէ՛ չէ, իմ հարսը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թըռ-
չեմ, սագիկդ առնեմ դուրս թռչեմ:

Աշուղը սագը տալիս է իրեն:

Սագն առնում է, ուսը գցում, թռչում, մի տեղ նստում
է, սկսում է ածել ու ճրտւրտալով երգել:



Ծընգը, մընգը,
Փուշիկ տւի, լօշիկ առայ,
Լօշիկ տւի, գառնիկ առայ,
Գառնիկ տւի, հարսիկ առայ,
Հարսիկ տւի, սագիկ առայ,
Սագիկ առայ, աշուղ դառայ,
Ծընգը, մընգը,
Ծիւ, ծիւ:


Ժիտիկը ինչն սագը իրեն պահեց:

Հանելուկ—Ալալա, բալալա, բեր խաղ արա, տար կախ արա:

Շ ու տ ա ս ե լ ու կ — «Բեռի, էլի էն լաւ արէն առ.
էն լաւ արէն էլի առ, քեռի:»

Ծ Ի Տ

Հուռին գնաց բանջարի,
Բանջար չեղաւ՝ խոտեղաւ,
Սոտի տակին ծիտ եղաւ
Ծ լ լ լ լ լ լ էն դուրս թռաւ:



28. Ա Ս Տ Ծ Ո Ւ Ս Ե Ղ Ա Ն Ը


Գարնանը բարի Աստուածն ասաւ.

— Սեղան բաց արէք փոքրիկ ճիճուների համար:
Եւ իսկոյն կեռասենին ծածկւեց կանաչ տերևներով:
Չարթնեց փոքրիկ ճիճուն, սկսեց կրծել թարմ տերև-
ները ու ասաւ.

— Ո՛վ է պատրաստել ինձ համար այս հրաշալի սեղանը:

Բարի Աստուածը նորից ասաւ.

— Սեղան բաց արէք ժիր մեղրի համար:
Եւ իսկոյն կեռասենին բաց արաւ իր սիպտակ ծաղիկները:
Մեղուն զարթեց արշալոյսին ու տրգտրգալով թռաւ դէ-
պի կեռասենին: Թռչում էր ծաղկից ծաղիկ ու ամենքից մի-
մի կաթիլ ծծում:




— Ա՛խ, ինչ անուշ խմիչք է.—մտածում էր նա իր փե-
թակը շտապելով.—էս ո՞վ է պատրաստել ինձ համար:

Եկաւ ամառը. Ու բարի Աստուածն ասաւ.

— Սեղան բաց արէք փոքրիկ թռչնակների համար:

Եւ կեռասենու վրա երևացին թարմ ու կարմիր պտուղները: Ուտում էին փոքրիկ թռչնակներն ու խաղում:



— Ախ, ինչ լիքը սեղան է. էս ո՞վ է բաց արել մեզ համար:

Աշնանը բարի Աստուածն ասաւ.

— Ամենքը լիացան. վեր բաղեցէք սեղանը:

Ու վեր կացաւ սառը քամին, թափեց տարաւ դեղնած տերևները: Տկոր կեռասենին դողում էր ցրտից:

— Ծածկեցէք դրան, որ չը մրսի.— ասաւ բարի Աստուածը: Իսկոյն եկաւ ձմեռը ու փափուկ ձիւնով ծածկեց կեռասենու մերկ ճիւղերը:

1) Ռ՞րն է մարդու սեղանը:

2) Ռ՞վ է բաց անում մարդու սեղանը:

29. Ո Ի Լ Ո Ի Ն Ք


Գարունը եկաւ ամպերով,
Ամպերը եկան անձրևով.
Անձրևը տանեմ արտին տամ,
Արտը ինձ ցորեն տայ,
Ցորենը տանեմ շաղացին տամ,
Ջաղացը ինձ ալիւր տայ.

Բաղիկ բաղիկ
Կարմիր թաթիկ.

Ռ՛ւր ես գնում կամաց, կամաց,
Չագուկներդ չորս կողմդ առած:
— Ես գնում եմ շուր գտնելու,
Չագուկներս լւանալու.
Չագուկներս մաքուր-մաքուր,
Տղոց երեսն աղտ է ու մուր:

Վերջի տողը կասե՞ր բաղիկը, եթէ քո երեսին նայէր:

32. Ռ՞Վ Է Մ Ե Ղ Ա Ի Ո Ր Ը



Սարդը կախ էր արել իր բարակ թելը ծառի ճիւղից ու վայր իջել: Ճուտիկը, Մուտիկը և Ճիւղտուրիկը, Չալ հաւիկի գիծ վառիկները, նրան տեսան:

— Ի՞նչ է, — ճւաց Ճուտիկը:

— Չէ, իմն է, իմը, — ճրկճկաց Ճիւղտուրիկը:

Ու երեքն էլ իսկոյն վազեցին, որ սարդը բռնեն և ուտեն:

Ճուտիկը վազեց՝ անփետուր թևերը թափ տալով:

Մուտիկը վազեց՝ բարակ վիզը ճիգ տալով: Ճիւղտուրիկը վազեց՝ իր վնասւած կարմիր ոտը կաղէկաղ քաշ տալով:

— Հեռացէք, իմն է.— վրա պրծաւ Ճուտիկը:

— Կորէք, իմն է.— հրեց Մուտիկը:

— Չեզ ո՞վ է տալիս.— բոթեց Ճիւղտուրիկը:

Իրար այնքան բռնեցին, հրեցին, որ սարգը էլ չըսպասեց
ու իր թելովը վեր փախաւ:

Վեր փախաւ ու վերեւից նայում էր թէ ինչպէս էին կո-
ւում փսրորիկները ու իրար կտցահարում:

— Հիմի էս ի՞նչ արիք, — ճշում էր Ճուտիկը:

— Դ՛նք վախեցրիք, — ծուում էր Մուտիկը:

— Իմ սարգը ինչ՞ն վախցրիք, — լաց էր լինում Ճիւղտու-
րիկը:

Երեքից ո՞վ էր մեղատու:

Առաժներ 1) Ծները իրար հետ կուեցին, ճամբորդի բանը չաջողեց:

2) Հաւը երազում կուտ կը տեսնի



33. ԾՆՃՂՈՒԿՆԵՐ

Կոտ ու կէս կորեկ ունեմ ցանելու համար,

Ճնճղուկներ թռան եկան ուտելու համար,

Կուացայ քար վեր առայ զարկելու համար:

Ղասաբներ դանակ բերին մորթելու համար,

Ազլիկներ թե քաշեցին փետրելու համար,

Պառաւներ պղինձ դրին եփելու համար:

Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,

Տէրտէրներ խաչով եկան օրհնելու համար,

Աշուղներ սագով եկան գովելու համար:

Այ. ճնճղուկիկ,

Կարմիր տոտիկ,

Միպտակ փորիկ,

Ուտեն կուտիկ,

Խմեն շրիկ

Աուի եզրիկ,

Պստիկ-մստիկ,

Փախչեն երթան ման գալու համար:

1) Քարը որ վեր կալայ, քանի՞ ճսճղուկ զարկեցի:

2) Այսքան մարդ ի՞նչ պիտի մորթէին ուտէին:

Առաժ—Չուրը չը տեսած, ոտներդ մի հանի:

Հանելուկ—Մի մարագ, մէջը լիբը ուրագ:

34. ԹՐԹՈՒՐՆ ՈՒ ԽԽՈՒՆՁԸ

Կաղամբի տերեւի վրա ապրում էր մի խխունջ:

Այդ տերեւի մի անկիւնում արդէն վաղուց ընկած էր մի
դեղին հատիկ: Այդ հատիկը թիթեռնիկի ձու էր:

Մի տաք օր ձւից դուրս սողաց մի փոքրիկ թրթուր. խ-
խունջը զարմանքով նայում էր այդ նոր արարածին:


«Ի՞նչ չնչին, ի՞նչ ողորմելի գատ է», մտածում էր նա:

Իսկ թրթուրը շատ ուրախ էր: Նա սիրում էր տաք արե-
ւը, իր կաղամբի տերեւը, ու երջանիկ էր:

Մի օր խխունջը մօտ եկաւ
ու պոզերը շարժելով ասաւ.

— Զարմանում եմ, ինչ՞ն ես
այդպէս միշտ ուրախ: Մեր
կեանքը իսկի էլ այդպէս թե-
թե չէ:

— Ինչ՞ն, — պատասխանեց թրթուրը, — շատ լաւ է: Ծու-



տով էլ մի սիրուն թիթեռ կը դառնամ, կը թռչեմ վեր, արեւ-
ւի ոսկի շողերի տակ. ան, ինչ լաւ կը լինի

Խխունջը երեսը շուռ տալ ու ծիծաղեց.

— Ինչ լիմար բաներ է դուրս տալիս սա:

Քիչ յետոյ թրթուրի ուրախութիւնը կորաւ: Թմրել մնա-
ցել էր մի տեղում:


Մի անգամ խխունջը անց էր կենում նրա կողքից, տե-
սաւ որ թրթուրը փաթաթւել էր մի տեսակ կաշւի մէջ ու
անշարժ ընկել:

— Այսպէս էլ յիմար, — բացականչեց խխունջը. — ասում էր՝
թիթեռնիկ պիտի դառնամ, ընկել սատկել է:

Մի քանի ժամանակ էլ անց կացաւ, խխունջը բոլորովին
մոռացել էր իր հարեանին և ապրում էր առաջւայ պէս կա-
ղամբի վրա: Մի օր էլ անց էր կենում նրա գերեզմանի մօ-
տով ու յանկարծ զարմացած կանգ առաւ: Թրթուրի պատը-
ւած կաշւի մօտ նրս-

տած էր մի սիրուն
թիթեռնիկ և նրա
թաւիշ թևերը փայ-
լում էին արևի շողե-
րի տակ:

— Մնաս-բարով,
խխունջ, ես գնում,
եմ. — կանչեց թիթեռնիկը, թևերը թեթև թափ տալով, բարձ-
րացաւ վեր ու կորաւ արևի պայծառ շողերի մէջ:



- 1) Ինչո՞ւ թիթեռը չէր թռչում, քանի դեռ թրթուր էր:
- 2) Խխունջը փոքրիկ թրթուրին ինչո՞ւ էր ողորմելի համարում:
- 3) Ուրիշ ի՞նչ կենդանի գիտես, որ պատեան ունի:
- 4) Ինչի՞ համար են խխունջի պոզերը:

Հանելուկ — Պառաւը նստել է գետնին, բուրբը հագել է բուր-
բին, ասում է՝ մըսում եմ, հա մըսում եմ:

— Ասա, տեսնեմ, մեր գիւղում
Կովերն ի՞նչպէս են կթում:

— Ահա այսպէս են կթում.

Ծիծը խլում հորթուկից,
Հորթը կապում մօր ծնկից,
Կովկիթն իրենց գոգն առնում,
Կովի կողքին կըկրգում.

ՓըՂՂ — բըժժ,
ՓըՂՂ — բըժժ:

- 1) Ուրիշ ո՞ր կենդանիներին են կթում:
- 2) Կաթը ինչո՞ւ են կթում:
- 3) Ինչո՞ւ են կթելիս հորթը կովի ծնկից կապում:

36. ՃԱՆՃԵՐԻ ՉՐՈՅՅՐ



Իրիկունը ճանճերը հաւաք-
ւել էին առաստաղին ու զրոյց
էին անում:

— Տը՛ղղ, տը՛ղղ, ինչ լաւ կին
է Սօֆիա մայրիկը, — ասում էր
մի ճանճ շաքարոտ ստները լի-
զերով: — Ամբողջ օրը շարշարում
է մեզ համար: Թէ՛յի ժամանակ


լիք շաքարամանը բերում է դնում մէջտեղը: Մեզ համար
անուշ է պատրաստում, կանֆետ է հանում, բոլորը մեզ
համար:

— Տը՛ղղ, տը՛ղղ, — մէջ մտաւ մի ուրիշը: — Այն օրն էլ երե-
խաները մեր խաղողը ուտում էին, եկաւ խլեց, դրաւ պահա-
րանի գլխին որ մենք ուտենք:

— Իսկ այն արջի նման մարդը, որ հայրիկ են ասում, —
դարձեալ սկսեց առաջինը, — ինչ անպիտան մարդ է: Մի տե-

սակ բան է ծխում, ծխով տունը լցնում է, քիչ է մտում խեղդու-
մես: Առջին էլ փոքրիկ ամանով մի բան է դրել, որ ինքը
թանաք է ասում: Այն օրը
փորձեցի, համը տեսայ, թնւ.
այնպէս դառն էր. քիչ մնաց՝
մէջն էլ խեղդուէր: Շատ ան-
պիտան մարդ է, շատ:

— Ծֆ, — հառաչեցին բոլոր
ճանճերը միասին, — ափսոս չի՞
Սօֆիա մայրիկը:



- 1) Սօֆիա մայրիկն էլ սիրո՞ւմ էր մանձերին:
- 2) Հապա ինչո՞ւ էր այնպէս հոգ քաշում՝ մանձերի համար:

Առաժ — էշն ընկաւ գարու հորը,
Ասաւ՝ էս լաւ է քանց իմ ախորը:

37. Քեռի՛ն Մեռե՛լ է

Գորտը գորտին կանչում է.
— Քեռի՛ն մեռել է, քեռի՛ն մեռել է:
— Ե՞րբ, ե՞րբ, ե՞րբ:
— Մէ-կէ-կէլ օրը, մէ-կէ-կէլ օրը:
— Ղո՞րթ, զո՞րթ, զո՞րթ:

38. Վ Ա Ր Դ Ը

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Տեսաւ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսաւ, ուրախացաւ,
Մօտիկ վագեց հայի վարդին:



Տղան ասաւ. — Քեզ կը պոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին:
Վարդը ասաւ. — Տես, կը ծակեմ,
Որ չը մոռնաս փշոտ վարդին:

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին,
Փուշը նրա ձեռը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին.
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

- 1) Փուշն ինչո՞ւ համար է:
- 2) Ինչո՞վ է զանազանում ծառը լծվից:
- 3) Ի՞նչով են զանազանում ծառն ու թուփը խտուից ու հացաբոյսերից:

Առաժ — Ամեն ծաղիկ իր հոտն ունի:

39. Ժ Ա Մ Ա Յ ՈՅ Յ

— Չը՛խկ-չը՛խկ, չը՛խկ-չը՛խկ, — հանդարտ ու միա-
կերպ գնում գալիս է ժամացոյցի ճօճանակը:
— Վեր կաց, վեր կաց, Գուրգէն, արդէն եօթը խփել է, —
զարթեցնում է մայրիկը տղին:
— Թող մի քիչ էլ քնեմ, — խնդրում է Գուրգէնը ձգձգե-
լով: — Մեր ժամացոյցը առաջ է վազում:
— Ո՛չ-ո՛չ, ո՛չ-ո՛չ, — պատասխանում է ժամացոյցը պատից:

Գուրգէնը գալիս է դպրոցից, վերարկուն հանում է,
զլիարկը դէն շարտում:

— Ե-կա՞ր, Ե-կա՞ր, — ողջունում է նրան ժամացոյցը:
— Ո՛ւ՛ֆ, դեռ մէկը չը կայ, իսկ հայրիկը միշտ երկուսին
է գալիս:

Աւ Գուրգէնը կանգնում է ժամացոյցի առջև, ոտը գետնին է զարնում ու կանչում.

—Ի՞նչ դանդաղ ես բանում, ժամացոյց: Մի քիչ շո՛ւտ. ես շատ եմ սոված:

—Ես-չէ, ես-չէ.—ծաղրում է նրան ժամացոյցը, իր երկար ճօճանակը հանգիստ աջ ու ձախ շարժելով:

Թէյը վաղուց հաւարել են: Գուրսը վաղուց մթնել է:

Գուրգէնը նոր է նստել դասերը սերտելու:

Իսկ ժամացոյցը ահագին աչքը չռել՝ նայում է ու կրկնում.

—Այ-այ, այ-այ:

1) Ի՞նչպիսի տղայ էր Գուրգէնը:

2) Ժամացոյցը մըր է քնում:

Ա. ա. ծ. ն. ե. բ.—1) Բան դրին՝ փախաւ, հաց դրին՝ հասաւ:

2) Այսօրեայ գործը վաղան մի թողնի:

40. ՈՆՅ ԵՆ ՀԱՐՈՒՄ ԽՆՈՅԻՆ

Թուր ծառից կապեցին,
Հաստ խնոցին կախեցին,
Երկու ծայրից բռնեցին,
Տարան բերին շարժեցին,

Թըլըխկ—չըլըխկ,

Չըլըխկ—թըլըխկ:

Ահա այսպէս հարեցին
Դեղին կարագ հանեցին:



1) Կարագը ի՞նչից հարեցին:

2) Կարագը հանելուց յետոյ՝ խնոցում ի՞նչ մնաց:

3) Չեղ մօտ էլ այսպէ՛ս են խնոցի հարում:

41. ԽՆՈՅԻ

Հարի, հարի, խնոցի,

Մէջդ բարի, խնոցի,

Ունկդ բարակ, խնոցի,

Մէջդ կարագ, խնոցի:

42. ԵՐԿՐԻ ՇՈՒՐՋԸ

—Հայրիկ ջան, ի՞նչ կայ մեր այգիներից դէնը,—հարցրեց Յասմիկը:

—Չը գիտե՞ս, աղջիկս: Արտեր:

—Իսկ արտերից դէ՞նը, հայրիկ:

—Սարեր: Տես:

—Իսկ սարերից դէ՞նը:

—Կրկին սարեր, կրկին ձորեր, ծովեր:

—Իսկ ծովերից դէ՞նը:

—Ուրիշ երկիրներ, ուրիշ աշխարհներ, էլի ծով, էլի ցամաք եւ գիտե՞ս, հողիս, եթէ այդպէս գնաս ու գնաս, ո՞ւր կը հասնես:

—Ո՞ւր:

—Հէնց այնտեղ, որտեղ հիմա կանգնած ես:

—Վա՛հ,—գարմացաւ Յասմիկը:


1) Խնձորի վրա նստել էին երկու ծանծ. մէկը ծամբայ ընկաւ—, գնաց ուղիղ, ուղիղ մ'իշտ առաջ. ո՞ւր հասաւ:

2) Գիտե՞ս ինչ ձեռ ունի երկերը:

3) Ի՞նչով են ծամբորդում ցամաքի վրա. ի՞նչով են ծամբորդում ջրի վրա:

4) Ի՞նչ տեսակ աղջիկ էր Յասմիկը:

Հ ա ն ե լ ու կ—Կ'երթայ, կ'երթայ՝ ճամբայ չը կայ, ճամբայ կ'երթայ՝ փոշի չը կայ:



43. Վ Տ Ա Կ

Մեր գիւղից վեր մինչ էսօր
Մի հին ծառ կայ մենաւոր:
Պարզ լեռնային մի վտակ
Խորտջում է նրա տակ:
էն վրտակում կէս օրին,
Երբ որ շորից նեղանում,
Գնում էինք լողանում:

Մեր գիծ, տկոբ խմբակով,
Աղաղակով, աղմուկով,
Խաղում էինք, վազվզում
Գոյնգոյն, մանրիկ աւազում,
Ու միշտ յոգնած ժամանակ
Նստում էն հին ծառի տակ:

1) Ո՞րտեղից է գալիս վտակը: Ո՞ր է գնում:

2) Ինչիցն է որ աւազ է լինում ջրի ափին:

Ա.ռ.ա.ծ.—Ձուրն իր ճամբէն կը գտնի:

Հանելուկներ—1) Էս կողմը դար, էն կողմը դար, մէջն
անդադար:

2) Ձին գնաց, թամբը մնաց:

Շ ու տ ա ս ե լ ու կ—«Փոկակապ Ակոփ ապի, ինձ համար մի փոկ
կապի, բեղ ասեմ՝ փոկակապ Ակոփ ապի:»



44. * * *

Փոքրիկ Արտաշէսը շւշա-
ցնելով գնում էր ձորով:
Յանկարծ լսեց, որ մի ուրիշն
էլ է շւացնում: Հէնց ի-
մացաւ ընկերն է, կանգնեց,
ձայն տւաւ.

—Վահանն, դ՞ու ես:

—Ես...

—Ատան, մեր հորթը ո՞ւր
գնաց. տեսար:

—Սար...

—Հանա՞ք ես անում, ի՞նչ է:

—Չէ...

—Վա՛յ. էդ հօ գայլը կ'ըւտի:

—Ուտի...

Արտաշէսը լալով վազեց տուն. տեսաւ՝ հորթն էլ է տանը,
Վահանն էլ:



1) Հապա ո՞վ էր Արտաշէսին պատասխան տուողը:

2) Ի՞նչ ղնենք այս պատմութեան վերնագիրը:

Մ.ռ.ա.ծ.ներ 1) Դատարկ կարասը մեծ ձայն կը տայ:

2) Կարասումը ինչ ձայն տաս՝ էն կը լսես:



45. ԾՏԻ ԶԱՐՄԱՆՔԸ


Քեռի Խէչանի այգում խաղողը հասել էր: Թըռչունները մէջը բէֆ էին անում, մանաւանդ մի փոքրիկ ծիտ: Նա ծնւել էր հէնց այդ այգում, մի սալորենու երկու ճիւղի արանքում: Ամբողջ օրը թռչում էր ողկոյզից ողկոյզ, այստեղ մի հատիկ, այնտեղ մի հատիկ, անուշ էր անում ու երգում: Մի օր էլ տեսաւ՝ գիւղացիք բթոցներով թափւել են այգին: Հեռացաւ, թառ եղաւ մի ծառի, ու խէթ-խէթ նայում էր այնտեղից: Տեսաւ որ գիւղացիք դանակներով կտրատում են ողկոյզները, բթոցներն ածում, շալակում տանում:

— Էս ի՞նչ անասուած բան է. ի՞նչ են անում էս մարդիկը իմ այգում, ո՞ւր են տանում իմ խաղողը. — զարմացած մտածում էր նա և չէր կարողանում հասկանալ:



- 1) Ո՞ւր էին տանում խաղողը:
- 2) Էս ամենը տարւայ ո՞ր եղանակին էր:
- 3) Խաղողից ի՞նչ են պատրաստում:
- 4) Խաղողի հետ միասին էլ ուրիշ ի՞նչ պտուղներ են համում:

Ա. ու ա ծ — Ծառը քանի պտուղ շատ ունենայ, գլուխը քաշ կը գցի:



46. Զախչախ քաղաւոր

Լինում է, չի լինում մի աղքատ ջաղացպան:

Մի պատուած բուրբ հագին, մի ալրոտ փոստալ գլխին ապրելիս է լինում գետի ափին, իր կիսաւեր ջաղացում: Ունենում է մի մոխրոտ բաղաճ ու մի կտոր պանիր:

Մի օր գնում է, որ ջաղացի ջուրը թողնի, գալիս է տեսնում պանիրը չըկայ:

Մին էլ գնում է ջուրը կապի, գալիս է տեսնում՝ բաղաճը չըկայ:

Էս ո՞վ կըլինի, ո՞վ չի լինի: Մտածում է մտածում ու ջաղացի շէմքում թակարդ է լարում: Առաւօտը վեր է կենում, տեսնում մի աղւէս է ընկել մէջը:

— Հը՞, գող անիծւած, դու ես կերել իմ պանիրն ու բաղաճը հաւկաց՝ հիմի ես քեզ պանիր ցոյց տամ: — Ասում է ջաղացպանն ու լինողը վերցնում է, որ աղւէսին սպանի:

Աղւէսը աղաչանք պաղատանք է անում: Ինձ մի սպանի—ա-

սում է—մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց թող, ես բեզ շատ լաուլթիւն կանեմ:

Ջաղացպանն էլ լսում է, կենդանի բաց է թողնում:

էս աղւէսը գնում է, էդ երկրի թագաւորի աղբանոցում ման է գալի ման, մի ոսկի է գտնում: Վագ է տալի թագաւորի մօտ:

—Թագաւորն ապրած կենայ, ձեր կտոր մի տէք, Չախչախ թագաւորը մի քիչ ոսկի ունի, չափենք ետ կրբերենք:

—Չախչախ թագաւորն ո՞վ է,—զարմացած հարցնում է թագաւորը:

—Գու գեռ չես ճանաչում,—պատասխանում է աղւէսը:—Չախչախը մի շատ հարուստ թագաւոր է, ես էլ իր վեզիրն եմ: Կտոր տուր, տանենք ոսկին չափենք. յետոյ կըճանաչես:

Կտոր առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամրացնում կտտի ճեղքում, իրիկունը բերում, ետ տալի. ճֆ, ասում է, զօռով չափեցինք:

—Միթէ ճշմարիտ սրանք կտտով ոսկի են չափել, մտածում է թագաւորը: Կտոր թափ է տալի, զրնչալէն մի ոսկի է վէր ընկնում:

Միւս օրը աղւէսը ետ գալիս է, թէ՛ Չախչախ թագաւորը մի քիչ ակն ու մարգարիտ

ունի. ձեր կտոր տէք, չափենք կը բերենք:

Կտտն առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում. կոխում է կտտի արանքը, էլ ետ իրիկունը ետ բերում:

—Օֆ, ասում է, մեռանք մինչև չափեցինք:

Թագաւորը կտոր թափ է տալի, մարգարիտը դուրս է թռչում:

Մնում է զարմացած, թէ էս Չախչախ թագաւորն ինչքան հարուստ պէտք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը կտտով է չափում:

Մնց է կենում մի բանի օր: Մի օր էլ աղւէսը գալիս է թագաւորի մօտ խնամախօս, թէ՛ Չախչախ թագաւորը պէտք է ամուսնանայ, քո աղջիկն ուզում է:

Թագաւորն ուրախանում, աշխարհքով մին է լինում:

—Դէ գնացէք, ասում է, շուտ արէք, հարսանիքի պատրաստութիւն տեսէք:

Թագաւորի պալատում իրար են անցնում, հարսանիքի պատրաստութիւն են տեսնում, իսկ աղւէսը ջաղացն է վագում:

Վագում է ջաղացպանին աչքալուս տալի, թէ՛ հապա՛ թագաւորի աղջիկը բեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, որ գնանք հարսանիք անենք:

—Վա՛յ, բու տունը քանդւի, այ աղւէս. էդ ինչ ես արել,—ասում է վախեցած ջաղացպանը: Ես ով, թագաւորի աղջիկը ով: Ոչ ապրուստ ունեմ, ոչ տուն ու տեղ, ոչ մի ձեռք շոր... Հիմի ես ինչ անեմ...

—Գու մի վախենայ, ես ամեն բան կանեմ.--հանգստացնում է աղւէսն ու ետ վագում թագաւորի մօտ:

Վագելով ընկնում է պալատը. Հայ հարնյ, Չախչախ թագաւորը մեծ հանդէսով գալիս էր, որ պսակի: Ամբիւն թշնամի զօրքերը յանկարծ վրա տւին, մարդկանց կոտորեցին, ամեն բան տարան: Ինքը ազատւեց փախաւ: Չորում մի ջաղաց կայ, եկել է մէջը մտել: Ինձ ուղարկեց, որ գամ իմաց անեմ, շոր տանեմ, ձի տանեմ, գայ պսակի, շուտով գնայ իր թշնամիներեց վրէժն առնի:

Թագաւորն իսկոյն ամեն բան պատրաստում է, տալիս աղւէսին, հետն էլ շատ ձիաւորներ է դնում, որ պատուով ու փառքով իր փեսին պալատ բերեն:

Գալիս են հանդէսով ջաղացի դռանը կանգնում: Ջաղացպանի բուրքը հանում, թագաւորի շորերը հագցնում, նստեցնում են նժոյգ ձիուն: Նըջապատւած մեծամեծներով, առջևից ձիաւորներ, ետևից ձիաւորներ—էսպէս հանդէսով բերում են թագաւորի պալատը: Իր օրումը պալատ չը տեսած ջաղացպան—շշկլւած, բերանը բաց մին շորս կողմն է, մին հագի շորերին է նայում, խլշկոտում ու զարմանում:

—էս ի՞նչու չըտեսի նման դէս ու դէն է նայում, աղւէս ախպէր,—հարցնում է թագաւորը:—Կարծես տուն չըլինի տեսած, շոր չըլինի հագած:

—Ձէ, դրանից չի,—պատասխանում է աղւէսը:—Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թէ իր ունեցածը որտեղ, էս որտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ տեսակ կերակուրներ են բերում: Ջաղացպանը չի իմանում՝ որին ձեռք տայ կամ ինչպէս ուտի:

—Ի՞նչու չի ուտում, աղէս ախպէր, հարցնում է թագաւորը:


—Գալու ժամանակ ճամբին որ կողոպտեցին, նրա համար միտք է անում: Ձէք կարող երեակայել, տէր թագաւոր, թէ ինչքան բան տարան և վերջապէս ինչ անպատուութիւն էր էտ մեր թագաւորի համար: Ի՞նչպէս հաց ուտի,—պատասխանում է աղէսը հառաչելով:

—Բան չըկայ, դարդ մի անի, սիրելի փեսայ, աշխարհք է, էդպէս էլ կըպատահի,—խնդրում է թագաւորը:—Այժմ հարսանիք է, ուրախանանք, քէֆ անենք:

Ու քէֆ են անում, ուտում, խմում, ածում, պար գալի. եօթնօր, եօթ գիշեր հարսանիք անում: Աղէսն էլ դառնում է քաւոր:

Հարսանիքից յետոյ թագաւորը իր աղջկանը մեծ բաժինք է տալի ու հանդէսով ճամբայ դնում Չախչախ թագաւորի հետ:

—Կացէք, ես առաջ գնամ տունը պատրաստեմ, դուք իմ ետեից



եկէք, ասում է քաւոր աղէսը ու վազ տալի:

Վազ է տալի վազ, տեսնում է մի դաշտում մեծ նախիր է արածում:

—էս ո՞ւմ նախիրն է:

Ասում են.—Շահ-Մարինը:

—Պա՛, Շահ-Մարի անունը էլ չըտար, որ թագաւորը նրա վրա բարկացել է, զօրքով իմ ետեից գալիս է. ով նրա անունը տաւ՝ գլուխը կտրել կը տայ: Որ հարցնի թէ ումն է, ասէք Չախչախ թագաւորինը. թէ չէ՛ վայն եկել է ձեզ տարել:

Վազ է տալի վազ. տեսնում է ոչխարի հօտը սարերը բռնել է:

—էս ո՞ւմն է:

—Շահ-Մարինը:

Հովիւներին էլ նոյնն է ասում:

Վազ է տալի վազ. տեսնում է ընդարձակ արտեր, հնձուրները միջին հնձում են:

—էս ո՞ւմ արտերն են:

—Չահ-Մարինը:

Հնձուրներին էլ նոյնն է պատիրում:

Վազ է տալի վազ. տեսնում է անվերջ խոտհարքներ:

—էս ո՞ւմն են:

—Շահ-Մարինը:

Խոտ հարողներին էլ նոյնն է ասում:

Հասնում է Շահ-Մարի պալատին:

—Շահ-Մար, ա՛ Չահ-Մար,—գոռում է հեռից վագելով:—Քուտունը չըբանդի, միամիտ նստել ես: Թագաւորը քեզ վրա բարկացել է, մեծ զօրքով գալիս է, որ քեզ սպանի, տուն ու տեղը քանդի, տակն ու վրա անի, ունեցած չունեցածդ էլ թագաւորական գրի: Մի անգամ քեզ մօտ մի վառիկ եմ կերել. էն աղուհացը գեռ չեմ մուացել: Վագեցի, եկայ, որ քեզ իմացնեմ: Երևա արա, գլխիդ ճարը տես, բանի չի եկել:

—Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ,—հարցնում է սարսափած Շահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռից փոշի բարձրացնելով գալիս է թագաւորը:

—Փախի, շուտով ձի նստի փախի, էս երկրից կորի, էլ ետ չընայես:

Շահ-Մարը իսկոյն նստում է իր լաւ ձին ու փախչում իր երկրից:

Աղէսի ետեից գալիս են հարսանքաւորները: Գալիս են գուռնով, թմբուկով, երգով, զօրքով, հրացան արձակելով ու աղմուկով:

Գալիս են Չախչախ թագաւորն ու իր կինը ոսկեգօծ կառքի մէջ, նրանց առջևից ու ետեից անհամար ձիաւորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են մեծ նախիր է արածում:

—էս ո՞ւմ նախիրն է, հարցնում են ձիաւորները:

—Չախչախ թագաւորինը, պատասխանում են նախրապանները:

Անց են կենում: Հասնում են սարերին: Տեսնում են ոչխարի ախպտակ հօտը սարերը բռնել է:

— Էս ումն է, հարցնում են ձիաւորները:

— Չախչախ թագաւորինը, պատասխանում են հովիւները:

Անց են կենում: Հասնում են ընդարձակ արտերի:

— Էս ում արտերն են:

— Չախչախ թագաւորինը:

Հասնում են խոտհարքներին:

— Էս ումն են:

— Չախչախ թագաւորինը:

Ամենքը մնացել են զարմացած, Չախչախ թագաւորն ինքն էլ թիչ է մնում խելքը թռցնի:

Էսպէսով Աղւէսի ետեից գալիս են, հասնում Շահ-Մարի պալատներին:


Քաւոր Աղւէսն Էնտեղ արդէն տէր է դառել, կարգադրութիւններ է անում: Ընդունում է խնամիներին ու նորից սկսում են բէֆը:

Հէյ, ջան երեխէր, քէֆ արէր դուր էլ:

Էսպէս հարսանիք երբ կըլնի մէկ էլ:

Որ ջաղացպանը դառնայ թագաւոր:

Ջաղացը պալատ, աղւէսը քաւոր:



ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Է - ՈՎ ԳՐԻՈՂ ԲԱՌԵՐ

աղւէս	դէպի	մէջ	վէգ
բզէգ	դէս ու դէն	նւէր	վէճ
գէր	թէկուղ	շէկ	վէրբ
գոմէշ	կէս	պարտէզ	վրէժ
դէգ	կէս	պէս	տգէտ
դէմ	մէգ	պէտք	
դէմբ	մէկ	սէր	

Օ - ՈՎ ԳՐԻՈՂ ԲԱՌ

ակօս	եօթը	կրօն
աղօթք	գրօննել	կօշիկ
ամօթ	դօրք	հօտ
առաւօտ	լօշ	հօտաղ
արօտ	խելօք	հօր (հս)
արօր	խօսք	մօր (մս)
գօտի	ծանօթ	մօտ
դրօշակ	ծնօտ	մօրուք
եզրօր	կարօտ	յօնք

Յ - ՈՎ ԳՐԻՈՂ ԲԱՌ

յաղթել	յասմիկ	յարմար
յամառ	յատակ	յետոյ
յայտնի	յատուկ	յիմար
յանդիմանել	յարգել	յիշել
յանկարծ	յարկ	յոգնել
յանցանք	յարձակել	յոյս

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒ

1 Ճամբայ	51	8 Ստւեր	62	տրտ	70
2 Անկողին	54	9 Հոր	64	16 Սաղ	72
3 Գիշեր	56	10 Միլեր	65	17 Բերան	79
4 Երկինք, աստղ	58	11 Գիր	66	18 Կաղամբ	80
5 Սամաւար	60	12 Տրեխներ	67	19 Նաւ	85
6 Ճրագ	60	13 Յորեն	69	20 Գետ	87
7 Մատ, մատանի	56	14 Ծուխ	69	21 Կամուրջ	87

Յ Ա Ն Կ


ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

1. Մուկն ու մանուկը	10
2. Պըստիկ նապաստակը	12
3. Սըրամիտ Սուրէնը	13
4. *Օրօր	15
5. Արագիլն ու գորարը	16
6. Պարոն գըդակը	17
7. Տերենները ընկնում են	19
8. Սըրտոտ որսկանը	21
9. Աշուն	22
10. Եղնիկի տէրը	23
11. *Աշնան վերջը	24
12. Չար Եղօն և իր եղբայրը	28
13. *Կոյր աշուղը	29
14. *Ամպն ու սարը	30
'ախի վերջակէտը	32
Հնարազէտ Համօն	34
17. Էս սեղանն ու էն սեղանը	36
18. *Կատու , Գ. Քաթիպա	37
19. Անքուն գետի հեքիաթը	38
20. Չմեռ	39
21. Ծախ գուլպաները	40
22. Դժևար հանելուկ	41
23. *Գըրիչ	43

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1. *Հուսաբացին	49
2. Ճամբորդներ, ժողովրդ.-ից	50
3. *Շունը	51
4. Ուլիկը	52
5. Արդէն աշակերտ է	53
6. Խելօք հաշիւ	54
7. *Կճուճը, ժողովրդական	54
8. Արև ու լուսին, ժողովրդ.-ից	55
9. *Ծաղիկները	56
10. Սուտասանը, ժողովրդ.-ից	57

11. *Փխօն, ժողովրդ.-ից.	58
12. Խոհանոցում	59
13. Չեռքի մատները, ժողովրդ.	60
14. Կացին ախպէր, ժողովրդ.	61
15. Պստիկ պատմութիւն	62
16. *Կանանչ ախպէր.	63
17. Չուրը փախաւ	64
18. *Ծոյլ աղջիկ, ժողովրդ.-ից.	65
19. Ծոյլ աղան, ժողովրդ.-ից	65
20. Դասին	65
21. *Կռունկներ, ժողովրդ.-ից	66
22. Արագիլների դարձը	66
23. *Արագիլ, ժողովրդ.-ից	68
24. Հատիկի դարթնելը	68
25. Գիժ քամին	6
26. *Գութան	70
27. Ծիտը, ժողովրդ.-ից	71
28. Աստծու սեղանը	7
29. *Ուլունք, ժողովրդ.-ից	74
30. Անճոռնի ճուտիկը	75
31. *Բաղիկ, Քաթիպա	77
32. Ո՞վ է մեղաւորը	77
33. *Ճնճղուկներ, ժողովրդ.-ից	78
34. Թրթուրն ու խխունջը	79
35. *Կիթ, Ա. Արարատեան	81
36. Ճանճերի զրոյցը	81
37. Քեռին մեռել է, ժողովրդ.	82
38. *Վարդը	82
39. Ժամացոյց	83
40. Ո՞նց են հարում, Ա. Ար.	84
41. Խնոցի, ժողովրդական	85
42. Երկրի շուրջը	85
43. *Վտակ	86
44. Արձագանք	87
45. Ծախ դարմանքը	88
46. Չախչախ թագաւոր, հեքիաթ 89	



3666

2013

« Ազգային գրադարան



NL0059793

